ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1862 — ԹԻՒ 668

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՒՌՆԻԱ, 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ

Եւրոպայի ընդհանուր խաղաղութիւնը օրըստ օրէ աւելի հաստատուելու վրայ է. քանզի կը տեսնենք որ Գաղղիոյ կայսերական կառավարութիւնը սկսաւ խնայութեան միջոցները ձեռք առնուլ իւր զինուորական կացութեանը նկատմամբ։ Գաղղիացւոց զօրաբանակը 400 կամ 415 հազար հոգիէն աւելի պիտի չըլլայ և պատերազմական նաւուց շինութիւնը մեծապէս նուազեցաւ։ Նաբոլէոն կայսեր այս խաղաղասիրական որոշումները սիրով ընդունուեցան Մեծին Բրիտանիոյ ժողովրդէն, որուն կառավարութիւնը ստիպեալ էր, Գաղղիոյ ըրած առջի զինուորական պատրաստութիւնները տեսնելով, ինքն ևս մեծ գումար դրամոց նուիրել պատերազմական պատրաստութեանց. այնինչ այժմ նոյն դրամը ուրիշ ազգօգուտ և շատ արդիւնաւոր բաներու համար կրնայ գործածել։

Մեծին Բրիտանիոյ և Գաղղիոյ կառավարութեանց մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները շատ բարւոք ու հաստատուն վիճակի մէջ կը գտնուին և այս երկու մեծ տէրութիւնները բարեբաղդաբար համաձայն են Եւրոպիոյ գլխաւոր խնդրոց վրայօք. ուստի այս բանը անշուշտ մեծ երաշխաւորուն մըն է ընդհանուր խաղաղութեան հաստատուն մնալուն։

Աւստրիոյ կայսրը, որ քանի մը ժամանակէ հետէ կաշխատի իւր պատերազմական նաւերը շատցնել, մօտերս ծովային զօրութեանց յատուկ պաշտօնատուն մը հաստատեց որ առաջուց չկար։ Այս պաշտօնատան վերատեսչութիւնը մասիս Վիքթէնպուրկ սեպուհին յանձնուեցաւ, որ վաճառականութեան պաշտօնեայ է։

Կը զրուցուի թէ Եւրոպիոյ մեծ տէրութեանց հաւանութեամբը և Մէքսիքոյի ժողովրդոյ առաջ կամեցողութիւնը համեմատ, յիշեալ երկրին գահակալութիւնը Ֆէրտինանտոս–Մաքսիմիլիանոս արշիդքսին պիտի յանձնուի, որ Աւստրիոյ կայսեր եղբայրն է։

Դիտել արժան է, որ Մէքսիքոյի երկիրը Ամերիկայի հիւսիսային մասին մէջ կը գտնուի. ժողովրդը ութ միլիոն հոգիէ բաղկացեալ է ու հաստատակայ տեսակի վարչութեամբ կը կառավարուի։ Սակայն անպակաս խռովութեանց և զանազան ընկերութեանց պատճառաւ, ժողովրդեան մեծ մասը կը փափաքի այժմ, որ միապետական ազատ կառավարութիւն մի հաստատուի և թագաւորական աթոռը վերոյիշեալ արշիդքսին յանձնուի։

Եթէ այս բանը 'ի գործ դրուելու ըլլայ, այս ինքն Մէքսիքոյի թագաւորական գահը Աւստրիոյ կայսերական գերդաստանին մէկ անդամին յանձնուելու ըլլայ, յայնժամ Անգլիան և Գաղղիան պիտի առաջարկեն, կըսուի, Աւստրիոյ կայսեր՝ որ Վենետիկի նահանգը Իտալիոյ թագաւորութեանը թողու, անոր փոխարէն ուրիշ գոհացուցիչ հատուցում ընդունելով։

Ընդհանրապէս կը յուսացուի թէ այս բանանախաւորութիւնները՝ ըստ ժամանակին, յաջողութեամբ պիտի պսակուին, թէպէտև Վենայի օրագրութիւնները բոց ու կրակ կարձակեն այս պիսի առաջարկութիւնի դէմ. զոր նախատական կը համարին Աւստրիոյ տէրութեանը համար։

Անգլիոյ բարլամէնթը փետրուարի 6ին, ըստ նոր տոմարի, սովորական հանդիսիւ բացուեցաւ. բայց գահախօսութիւնը պատգամաւորութեամբ եղաւ. այսինքն գլխաւոր նախարարներէն մէկը թագուհւոյն կողմանէ կարդաց զգահախօսութիւնը։ Նորին Վեհափառութիւնը այս առթիւ կը ծանուցանէ իւր ժողովրդոց թէ Եւրոպիոյ տէրութեանց հետ Մեծին Բրիտանիոյ ունեցած բարեկամական յարաբերութիւնները կը շարունակուին և հաստատուն են միշտ. կը յուսայ նաև թէ ընդհանուր խաղաղութիւնը անվնաս պիտի մնայ Եւրոպիոյ մէջ։ Թագուհին իւր գահախօսութեանը մէջ կը յիշէ Ամերիկոյ Միացեալ Նահանգաց հետ պատահած վէճը և անոր գոհացուցիչ վախճանը, նմանապէս զգաշնագրութիւնը երեք տէրութեանց (Անգլիոյ, Գաղղիոյ և Սպանիոյ) Մէքսիքոյի մէջ, վերջապէս Նորին Վեհափառութիւնը տեղեկութիւն կուտայ Չինաստանի մէջ եղած արշաւանքին և Մարոկի գործոց վրայօք։

Գաղղիոյ կառավարութիւնը՝ Հռոմի հետ ունեցած բանախօսութեան թղթերը ծերակուտին և պատգամաւորաց ժողովոյն առջև դրաւ։ Այս պաշտօնական գրութիւններէն յայտնի կըտեսնուի թէ Գաղղիոյ դահլիճը ամեն ջանք 'ի գործ դրած է համոզելու համար զսրբազան պապը և Հռոմի կառավարութիւնը որ բարեկամական կերպիւ հաշտուին Իտալիոյ միացեալ թագաւորութեանը հետ և դաշնադրութիւն մի հաստատեն մէջերնին։ Բայց սրբազան պապը միշտ կը պատասխանէ եղեր ըսելով, "Պապասենք և տեսնենք դէպքերը", որով կուզէ կերպիւ մը իմացընել թէ ժամանակը պիտի փոխուի և սուրբ գահը իւր կորուսած երկիրները ձեռք պիտի ձգէ։ Բայց Ենթոնէլլի կարտինալը՝ աւելի բացայայտ խօսելով, հեռաւեալ կերպիւ պատասխաներ է Գաղղիոյ կառավարութեանը։

"Ոչ և է իրաւախոհութիւն կամ բարեկամական պայմանագրութիւն անկարելի է սրբազան գահին և զինքը կողոպտողաց մէջ։ Քանզի ոչ սրբազան քահանայապետը և ոչ սուրբ ժողովը իշխանութիւն չունի եկեղեցւոյն վերաբերեալ փոքրագոյն մասը անգամ ուրիշին տալու"։

Այս խօսքերէն և ասոր նման ուրիշ ապացոյցներէն կըտեսնուի թէ Գաղղիոյ խաղաղասիրական ջանքը անօգուտ եղած են, թէ Հռոմի

ԲԱՆԱՍՊՐՈՒԹԻՒՆ

ՕՆՆՈՒԹԻՒՆ

Հրատարակեալ գրուածոյ Սեբէոսի Լալարեանց պոլսոյ արքեպիսկոպոսի։

Մեծարգոյ Պ. Ստեփաննոս Լազարեանց, վարդապետն Տրէրոյ(1) Երևելեան լեզուագիտութեան, յետ դպրոցական գիրքերու անուանելոյ զմերազնեայ ուսումնականքը կամ զԲերականութեան և զՃարտասանութեան դասատուքը առհասարակ, թերևս զիւր անձնը արդարացուցանելոյ կամ անմեղադրելի կացուցանելոյ դիտմամբ՝ ասումէ իւր Վարդապետարանի յառաջաբանին մէջ (էջ 8). "Այս բաները խօսելով՝ կամք չունէինք երբէք խոցել կամ վիրաւորել Հայոց քերականութեան և Ճարտասանութեան պատուելի դասատուքը, այլ հաւատարիմ մնալով առաքելական բանին՝ թէ Խօսեցարո՛ւք զՃշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք ("Եփես. դ. 25). կատարում ենք մեր պարտականութիւնը որպէս հաւատացող քրիստոնեայ"։ Եւ զայս ասելով՝ կամենումէ հասկացընել, թէ քրիստոնեայ մարդկան կրօնական պարտուց մէջն ևս այս է, որ միշտ Ճշմարտութիւն սիրեն, միշտ Ճըշմարտութիւն քարոզեն, և միշտ զՃշմարիտը խօսին իւրեանց ընկերակցաց հետ, չնայելով ամենևին թէ նոքա յայն խօսքերից խոցուելու են կամ թէ վիրաւորուելու։

Այս կանոնս ամենայն մասամբ՝ հաւանելի՞ է արդեօք ամենեցուն, թէ ո՛չ, չգիտեմք. միայն 'ի միտ բերելով զՏոքթորի միւս վէճերը ևս (կամ լաւ ևս ասել՝ պատուէրը), "Որ հակառակորդները զարկիր իւրեանց յատուկ զէնքովը, ապա կըպապանձեն նոքա", անպատշաճ չեմք համարում առայժմս կանոնիս հետևելով՝ անաչառատես աչքք ընդնել զյիշեալ հեղինակի այն ամենայն գրուածքը՝ որք մինչև յայժմ տպագրութեամբ հրատարակուած են, և որք յայսմ հետէ ունին հրատարակուիլ։

Մեր Օգնութեանց բուն և ներքին նպատակն չպիտի լինի հակառակասիրութիւն կամ պարսաւարանութիւն և նախատինք ընդդէմ մեր սիրեցեալ ընկերակցի, վասնզի այսպիսի անզգոնելի գիտաւորութեան տէր մարդն՝ դատապարտելի է միշտ, և արժանի այն Առաքելասաստ յանդիմանութեանն՝ զոր լսեցին երբեմն վիճասէր Գաղատացիքն. "Եպա թէ զմիմեանս խածատիցէք և ուտիցէք (թշնամութեամբ, հակառակութեամբ, միմեանց ձայն տալով, ընդ միմեանս նախանձելով, և այլն,) զգո՛յշ լերուք՝ զուցէ 'ի միմեանց սատակիցիք", այլ՝ պիտի լինի միայն յերևան հանել և ապացուցութեամբք կամ վաւերական վկայութեամբք հաստատել այն գրուածոց միջում գտեալ ժամանակագրական և պատմական սխալանքը անհարազատ կամ օտար նշանակութեամբ 'ի գործածուած բառքը, ընդդէմ ուղիղ Հայախօսութեան կամ ընդդէմ լեզուիս յատկութեան եղած խորթութիւնքը, և զանազան առարկայից կամ իրաց վերայ հրատարակուած անուղիղ կամ մերժելի կարծիքները։

Ձկարծեմք՝ թէ մեծարգոյ Տոքթորին անհաճոյ երևի՝ կամ բոլորովին աւելորդ և անօգուտ համարուի՝ մեր այսօրինակ քննաբանական երկասիրութիւն, որովհետև քրիստոնէի՝ կամ (ինչպէս ինքն է գրում) հաւատացող քրիստոնէի՝ անհրաժեշտ պարտականութիւն է՝ ո՛չ միայն խօսել ընկերին զՃշմարտութիւնը, այլև զնոյնը լսել յընկերէն։

Ա.

Պատուելի Տոքթորն՝ իւր Վարդապետարան Կրօնի մակագրեալ գրքի մէջ (որ տպուած է 'ի Մոսկուա 'ի 1853 թուականին Քրիստոսի) 19երորդ էջումը գրում է, "Աւելի մանրուք և կատարեալ վարդապետութիւնք պարգևեալ մեզ Աստուած Նորկտակարանի կամ Աւետարանի մէջ, այսինքն՝ այն բարի Աւետարանքովը որ Աստուած 1850 տարի յառաջ Քրիստոսի բերանով յայտնեալ է մարդկային ազգին"։

Այս բանիս մէջ տեսանում եմք մեք մի ժամանակագրական անուղղութիւն, որ թէպէտև ծանր՝ վնասակար կամ դայթակղական բան չէ, բայց այսու ամենայնիւ սխալ է։ Հաստատեմք ուրեմն զմեր ասածը։

Պարզ է, թէ Փրկիչն մեր Քրիստոս՝ մինչ դեռ երկրի վերայ էր՝ զիւր նոր օրինադրութիւնը կամ վարդապետութիւնը հրատարակումէր՝ ո՛չ գրով, այլ՝ միայն ինքնասայ քարոզութեամբ, անձամբ աւետարանելով գիւղերի և քաղաքների մէջ։ Բայց երբ

---

(1) Ցաճախ չկրկնելոյ համար 'ի ձանձրոյթ ընթերցողաց գեղեցիկակիս անունը եւ տոհմանունը, բառական եմք համարում՝ այսուհետեւ սոյն քննադատական յօդուածոյս մէջ յիշատակել զնա միակ ուսումնական տիտղոսովս Տոքթոր որ աւելի ճիշդ նշանակութիւն ունի այժմ եւրոպական լեզուաց մէջ, քան թէ մեր լեզուումը բառս վարդապետ։

կառավարութիւնը յամառեալ կը մնայ՝ և չուանը շատ կը քաշէ, որ՝ ըստ երևմանց, պիտի կոտրի։ այսինքն Պաղեստան՝ չկրնալով մշանջենաւոր կերպիւ իւր զօրքը Հռոմի մէջ թողուլ, վերջապէս պիտի հանէ զանոնք անկէց, և յայնժամ սրբազան գահին ձեռքը գտնուած այժմեան նահանգներն ևս, միւս նահանգաց պէս անձնատուր պիտի ըլլան Իտալիոյ Թագաւորին, և գործը պիտի լմննայ։ Կուզեմք ասել թէ բոլոր Իտալիոյ աշխարհական իշխանութիւնը Վիքթոր-Իմմանուէլ Թագաւորին ձեռքը պիտի ըլլայ և հոգևոր իշխանութիւնը միշտ սրբազան Պապին ձեռքը պիտի մնայ, որ յետ այնորիկ միոյ տեառն պիտի ծառայէ, անհնար ըլլալով ըստ Աւետարանին, երկուց տէրանց ծառայել։

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ

Հիմնաւոր փոփոխութիւն մի տեղի ունեցաւ այս հաշտաւոր միաբանութեան մէջ, որ պապական կոնդակաւ երկու զատ միաբանութեանց բաժնուեցաւ։ Նորին Սրբազնութիւնը յիշեալ կոնդակաւ, որ Յունուարի առջի կիրակուրց ամսաթիւը ունի, Արևմտեան առաքելութեան պաշտօնը մէկ միաբանութեան կը յանձնէ և արևելեան առաքելութեան պաշտօնը միւս միաբանութեան։

Քահանայապետական այս կոնդակին մէջ գրուած է թէ Հռոմի եկեղեցին կը ճանաչէ և կընդունի ամէն ծէսերը որոնք օրինաւորապէս սահմանեալ են եպիսկոպոսներէն, և 'ի մէջայլոց, արևելեան ծէսը ամէն ժամանակ ոչ միայն վաւերացաւ, այլև քանի մի երկիրներու համար Հռոմի քահանայապետներէն հրամայուեցաւ որ 'ի գործ գրուի։

Այս կոնդակին նպատակը սուրբ բան չէ բայց միայն աշխատիլ միաւորելու զՅոյները և արևելեան միւս ժողովուրդները Հռոմի Լատինական եկեղեցւոյն հետ։

Հաւատոյ տարածման արևելեան նոր միաբանութեան անդամները, որոնք կարդինալներ են, արդէն կարգուեցան. նմանապէս անոնց խորհրդականներն ևս սահմանուեցան ըստ տնօրէնութեան սրբազան Պապին։

—Հռոմէն Լինդէբանաու Պէլջ լրագրոյն կը գրէն թէ սրբազան Պապն հրամանացը համեմատ Մայիս ամսոյն մէջ ընդհանուր ժողով մի պիտի գումարուի 'ի Հռոմ. ուր հրաւիրեալ են բոլոր հռոմէադաւան եպիսկոպոսները։ Թէպէտև այս ժողովոյն նպատակը, ըստ արտաքին երևմանց, 'ի Թիւս Աբգոց դասակարգութիւնն է Յիսուսեան կրօնաւորաց ոմանց, որոնք Չինաստանի մէջ նահատակուեցան իրենց կրօնական քարոզութեանը համար, սակայն այս նպատակը պատճառանք մի է և սրբազան գահին գիտաւորութիւնը՝ պապերուն աշխարհական իշխանութեան խնդիրը որոշել տալէ յետեալ ընդհանուր ժողովոյն մէջ։ Իւր որովհետև տարակոյս չկայ թէ այս ժողովը պիտի հաստատէ սրբազան գահին սովորական պատասխանը՝ Ալ ֆորէմ, non possumus, և հաստատուն պիտի պահէ աշխարհական իշխանութեան սկզբունքը, վասնորոյ ընդհանրապէս կը յուսացուի թէ Պաղեստոյ կայսերական կառավարութիւնը Մայիս ամսոյն մէջ կամայ ակամայ պիտի ստիպուի իւր զօրքը Հռոմէն քաշել, համոզուած ըլլալով թէ անկարելի է պապու թեան կարծեցեալ իրաւունքը միաբանել Իտալիոյ անկախութիւն պահանջմանցը հետ։

Լինդէբանաու Պէլջ օրագրութեան հետ՝ Լոնտոնի Դայլի օրագիրը ևս կը յուսայ 'ի օրինաւոր պատճառներ յառաջ բերելով կը հաստատէ թէ Հռոմի խնդրոյն լուծումը պիտի չուշանայ։

ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՑ

«Պրեթէ երկու տարի կայ որ Հոլլուէյ բարձիշը ընկալաւ, միջնորդութեամբ Իէքիի հռոմէադաւան քարոզչաց, հրամանագիր մի Չինաց կայսրէն, որ հաճութիւն կուտայ յիշեալ փառաւոր(1) դեղերէից Չինաստանի ամէն կողմը մտնելուն։ Ուստի այսօրուան օրս նոյն դեղերը կը գտնուին 'ի Իէքին և Չինաստանի ամէն մեծ քաղաքաց մէջ հանդերձ Չինաց ընդարձակ գրուած տետրակներով, որոնք հարկաւոր բացատրութիւնները կուտան վասն գործածութեան յիշեալ դեղերէից։

«Բժշկական գիտութիւնը շատ խղճալի կացութեան մը մէջ կը գտնուի 'ի Չինաստան. և այս պատճառաւ Հոլլուէյի դեղերը օր ըստ օրէ մեծ յարգ և համարում կը ստանան այն տեղ, ինչպէս հռչակաւոր եղած են աշխարհիս ամէն կողմը։ Ամերիկայի հիւսիսային և հարաւային մասին մէջ այս դեղերը գերագոյն համարուած են ուրիշ ամէն մասնաւոր կամ գաղտնի դեղերէն, և Բոնրիէ Նէ-- անուն լրագրութեան խմբագիրը

(1) Կայսերական հրամանագրին մէջ այս ածականը տրուած է Հոլլուէյի դեղերուն։

սկսաւ աւետարանել։—Տոքթորն ասումէ. թէ 1850 տարի յառաջ։ Եթէ այդպէս, ուրեմն առանց երկբայութեան պիտոյ է ասել (թէև . . . . բան) թէ Քրիստոս զիւր քարոզութիւնը սկսած է՝ ոչ 'ի չափահաս այլ 'ի տղայական հասակին, այսինքն երեք տարեկան եղած ժամանակում. վասնզի 'ի 1853էն (որ Վարդապետարան գրքի տպագրութեան տարին է) եթէ 'ի բաց հանուի 1850, մնայ 3։ Բայց հակառակ այսմ՝ յայտնի է 'ի Ս. Աւետարանչաց և 'ի Ս. Հարց գրուածներից, որ Քրիստոս ոչ թէ յառաջ քան զմկրտութիւնն սկսաւ քարոզել, այլ՝ յետ մկրտութեանն և քառասնօրեայ ծոմապահութեանն։ Եւ որովհետև մկրտեցաւ նա երեսնամեայ, յայտնի է երևումէ յայտնապէս, որ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ կենսաբեր՝ վարդապետութիւնքն սկսուած են նորա բերանով քարոզուիլ՝ ոչ թէ 1850 այլ՝ 1820 տարուով յառաջ քան զՏոքթորի նախայիշատակեալ գրուածոյ հրատարակումը։

Բ.

Վարդապետարանի 34երորդ էջումը ասումէ Տոքթորն. «Հաւանական է երևում մաքի համար, որ Աստուած ոչ թէ միայն այս փոքր երկրիս վերայ աղնիւ էակներ բնակիչ է դրել, այլ թէ այն անչափելի տիեզերքի մէջ ուրիշ ասահեղներ ևս բանական արարածների բնակարան են»։

Բանական արարած կոչին մարդիկ։ Ուրեմն՝ ըստ կարծեաց Տոքթորին՝ ասողերի մէջ ևս մարդիկ են բնակում, ինչպէս այս երկրիս մէջ։ Սակայն այդպիսի վարդապետութիւն երբէք չէ ընդունած Առաքելական Ս. եկեղեցին Հայաստանեայց։ Այդ վարդապետութիւնդ օտար է ղլխովին ոչ միայն Հայաստանեայց՝ այլև այլոց Արևելեան և Արևմտեան եկեղեցեաց վարդապետութենէն։ Օտար է, ասում եմ, ղլխովին, օտար՝ և միանգամայն մերժելի։ Վասնզի ոչ Աստուածաշունչ գրոց հիմն ունի, և ոչ 'ի գրուածոյ Ս. Հարց և վարդապետաց, այլ լոկ կարծիք է . . . . կարծիք Պիւթագորասի, Անաքսագորի, Դիմոկրիտոսի, Քսենոփանէսի, Հայլքանի մի մոլորամիտ հին փիլիսոփայից՝ և նոցա հետևող աղանդաւորաց. զորս յետագայ ողջամիտ փիլիսոփայք խնամով իմն քննելով և զանստուգութիւնը քաջ ճանաչելով՝ հերքած են իրաւամբք. և մեք ևս պարտիմք հերքել առանց այլևայլութեան։ Վասնզի յայս անհիմն և մոլար կարծեաց այլ ևս շատ մոլորութիւնք կարեն ծնանիլ, այնպիսի մոլորութիւնք, որք ոչ միայն ծիծաղելի՝ այլև վտանգաւոր են յոյժ քրիստոնէական սուրբ Կրօնիս։ Թէ կամիք իմանալ, ով ընթերցողք, թէ ինչ մոլորութիւնք կարեն ծնանիլ, լսեցէք։

Եթէ մինն 'ի քրիստոնէից իբրև ճշմարիտ վարդապետութիւն ընդունի զայդ մոլար կարծիքը, հարկաւ պիտի հետևեցուցանէ։

Նախ՝ թէ մարդկային ազգն չէ սերեալ 'ի միոյ միայն նախահօրէն Ադամայ, ըստ որում նորա սերունդքն՝ միայն այս երկրագնդի վերայ սփռեցան. և կարող չէին նոքա թռչել գնալ՝ մոլորակների և աստղերի մէջ մտանել, և այն տեղերումը բնակութիւն հաստատել, ճանիլ և բազմանալ։

Երկրորդ՝ թէ սուտ են ուրեմն Աստուածաշունչ Գրոց բանքն, որք յայտնում են՝ թէ 'ի մի արեանէ արար Աստուած զմարդկային ազգը, կամ թէ՝ Ադամ միայն է Ա-ալնասպեղծ մարդ, Եւա մարդ ընդհանուր մարդկային։ Արարածոց վերջերորդ օրումը, և գրուեցաւ երկրաւոր դրախտի մէջ։

Երրորդ՝ թէ աստղերի և մոլորակների մէջ բնակուած մարդիկն, ազատ գոլով 'ի սկզբնական մեղայ հարկ է որ անմահք ևս լինին, որովհետև միայն մեր Ադամայ համար պատմումէ Աստուածաշունչն՝ թէ պատուիրանազանց եղև, և 'ի պատիժ յանցանացն՝ զմահանալոյ վճիռը լսեց յարարչէն, «Հող էիր և 'ի հող դարձցիս»։

Չորրորդ՝ թէ այն լուսաւոր գնտերի ժողովուրդքն դեռ զուրկ են յոր և իցէ օրինական գրքերից, գուցէ և 'ի կրօնից, որովհետև ոչ մի մարդոյ չէր կարելի յայս աշխարհէս գէպ 'ի նոցա աշխարհները ճանապարհորդիլ, շրջիլ նոցա մէջ, և քարոզելիսմ զՄովսէսի Հնգամատեանքը, կամ զՔրիստոսի Աւետարանը, և կամ զՄահմետի Գուրանը։ Իսկ եթէ կարծուի՝ թէ նոքա ևս քրիստոնեայք են, այն ժամանակ,

Հինգերորդ՝ պիտի հետևեցուցանէ, թէ ուրեմն Քրիստոս ինքն իջևանած է նոցա մօտ՝ 'ի համարձման ժամանակին՝ զիւր վարդապետութիւնքը քարոզելոյ համար, ինչպէս քարոզած էր երկրաբնակ ժողովրդոյ։ Եւ նման լինի այս՝ այն մոլորութեան, զոր յառաջին դարումը յետ Քրիստոսի՝ հնարեց Հերմոգենէս աղանդապետն՝ քարոզելով, թէ Քրիստոս յերկինս վերանալոյ ժամանակին՝ արեգական կամ լուսնի գնտի մէջ մտանելով՝ երկոցունց մեկուս

անցնելէ 'ի վեր և թափառական անդորձ շատ մարդիկ քաղաքս վռնտուելով, հասարակաց անդորրութիւնը վերահաստատուեցաւ։

Մօսիւ Լամպէր անուն գաղղիացի վաճառականը, որ Ընդկաստանի ծովուն մէջ եղած Մատակասքար անուն մեծ կղզին կրբնակի ու անոր երիտասարդ թագաւորին Ռատամա Երրորդին քսալ մեծ ազդեցութիւն ունի, այս օրերս Աղէքսանդրիայէն անցնելով Փարիզ գնաց. ուր Նաբոլէոն կայսեր հետ պիտի տեսնուի և պաշտօն մը ունի կատարելու կրսեն, Մատակասքարի կառավարութեան կողմանէ, որ Գաղղիոյ տէրութեան ազդեցութեանցը հակամետ կերևի։

ԱՕԳՈՒՅՆ

Ամերիկայի նախընթաց թուոյն մէջ հրատարակեցինք Իզմիրնի սրբազան Սինոդին վճիռը՝ որ կրգատապարտէ արժանապատիւ տեառն Ստեփաննոսի Նազարեանցքանի մը գրուածները։

Տարակոյս չունենալով թէ յարգոյ հասարակութիւնը հետաքրքրութիւն պիտի ունենայ քիչ կամ շատ տեղեկութիւններ ունենալ նոյն գրուածոց նկատմամբ, արժան համարեցինք պատուելի տեառն Մոերայ Մոսերեանց մաքիստրոսի՝ յիշեալ գրուածոց վրայօք ըրած, զննութիւնները Իսանասիրականին մէջ հրատարակել։

Ընդկաստանէն Մշալա-ոյ բաժանորդներէն ոմանք տեղեկութիւն խնդրած ըլլալով 'ի մէջ Կոստանդնուպօլսոյ համազգային Սարեգործական Ընկերութեան վրայօք, արժան կրհամարիմք 'ի ծանօթութիւն նոցա հրատարակել նաև հետևեալ յօդուածը, զոր Մոփ ըլագրոյն 519 թուոյն մէջ կարդացինք։

«Անցեալ դեկտեմբերի 31րդ օրը գումարուած ընդհանուր ժողովին մէջ բացուած ստորագրութեան հաշիւը ներկայացնելով տեսնուեցաւ որ 110,000 դուռուշի չափ նուէր հաւաքուած է եւ թէ այս բանիս համար կարգեալ յանձնաժողովին ջանիւքը մեկ ամսուան միջոցի մէջ հաւաքումը մինչեւ 200,000 դուռուշի հասցնելու մեծ հաւանականութիւն կայ։

«Ուստի որոշուեցաւ որ, որ եւ է տնօրէնութիւն մը չեղած ձեռնարկութեան վերաբերեալ՝ առայժմ ստորագրութիւնը շարունակուի։ Եւ որովհետեւ նոյն իսկ ընկերներէն շատը տակաւին մասնակից չեն եղած՝ թեւ յանձնաժողովին անդամները ըստ կարելւոյն կաշխատին զամէնքը գտնելու, հարկ կրնամարիմք հրատարակել յանձնաժողովին անդամոց անունները։

Գարոնայր,
Եսայեան Թովմաս.
Խուրտաճեան Գրիգոր.
Ծանճի Վիլէնցօ.
Կելկել Փիլիպպոս.
Միւհենտիս Մարտիրոս.
Պեյլիկճեան Ճանիկ.
Պուռուսնուզեան Յակոբ։

Ուզողը կրնայ՝ իր ազգասիրութեան նուէրը տալու համար, այս մեծապատիւ անձանց մէկուն դիմել, որ այս բանիս համար ամեն ծառայութիւն ընելու պատրաստ են, եւ որոնց անձնանուէր աշխատութիւնը ընկերաց պարտքն է բերեւցնելու ջանալ յօժարամիտ ձեռնտուութեամբ։

Կ. Պոլիս, 17 Յունուար 1862։

Մեր նախընթաց թուոյն մէջ զրուցեցինք, թէ Ամերիկայի Միացեալ Նահանգաց մեծաքաղաքացի հիւպատոսը սուրբ Մեսրոպեան վարժարանին այցելութեան գալով և անոր յառաջադիմութիւնը տեսնելով ուրախացաւ ու իւր գոհունակութիւնը գրով յայտնեց յիշեալ այն վարժարանին այցելուց տումարին մէջ։

Հաւասիկ յիշեալ գիտնական հիւպատոսին գրածին թարգմանութիւնը։

«Շատ ուրախ եմ որ պատեհութիւն ունեցայ յայտնելու սրտիս բերկրութեան զգացմունքը, զոր այս վեհ հաստատութեան տեսարանը պատճառեց ինձ։

«Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ բազմաթիւ ազատ դպրոցներ կան վասն ամենայն կարգի ժողովրդեան, թէ բարձրաստիճան է եղեր եւ թէ ստորին անձ մի, թէ հարուստ եւ թէ աղքատ. ուստի շատ քիչ մարդիկ կրգտնուին Ամերիկայի անբաւ տարածութեանը մէջ որ բոլորովին զուրկ ըլլան կրթութենէ։

«Ուրախ եմ յոյժ որ այս վարժարանիս մէջ նմանօրինակ պատուական աղբիւր մի կրգտնեմ Հայ ժողովրդեան մէջ գիտութիւնը ծաւալելու համար։

(Աւրագրեալ՝) ՃՈՒԼՕՍ ՊԻՆԿ
Ամերիկայի Միացեալ Նահանգաց
հիւպատոս, 'ի Զմիւռնիա։

Երկուշաբթի օրը մեր գերապատիւ առաջնորդ Հայրը քանի մի քահանայիւք և ընկերութեամբ երեք լեզուագէտ գլխաւոր անդամոց ազգիս, Ամերիկայի հիւպատոսարանը գնաց փոխադարձ այցելութիւն ընելու մեծաշուք միստր Պինկ հիւպատոսին։

Միացեալ Նահանգաց երեսփոխանը, որ իւր պաշտօնական միաձև զգեստը (ունիֆորմա) հագած էր, մեծ յարգութեամբ և շատ մեծարանօք ընդունեցաւ մեր հոգեւոր հովիւը՝ իւր մտերիմ խնդակցութիւնը յայտնելով անոր Իզմիրի ազգային դպրատանց բարեկարգութիւնը համար և քաղաքիս Հայոց ազգին բարոյական և նիւթական յառաջադիմութեանը համար։ Յառաջադիմութիւն, զոր հաճութեամբ սրտի գիտեցի և դրեցի, ըսաւ, իմ կառավարութեանս։

Մեր վերջին թուոյը լմաց տուինք հասարակութեանը թէ Մոսկուայի մէջ հրատարակեալ Ն-աչաղ անուն ամսատետրին և Համբա-աբեր Ո-սիոյ անուն կիսամսեայ լրագրին տարեկանը, երկուքը մէկտեղ 5 քարպովանց է։

Իսկ այժմ այս նիւթիս վրայօք հետեւեալ ծանուցումը կրկարդամք յիշեալ լրագրին յունուարի 10 թուոյն մէջ։

"Համբա-աբեր Ո-սիոյ լրագրիս ստացումը աւելի դիւրացուցանելոյ համար՝ վճռեցինք բանալ ստորագրութիւն և նորա համար միայն, առանց Ն-աչաղի, նշանակելով գին (թէ Մոսկուայի մէջ և թէ ուղարկելով) ամբողջ տարւոյ համար 3 արծաթ ռուբլի, իսկ կէս տարւոյ համար (այն է՝ Փետրուարից մինչև օգոստոս ամիսը՝ 1ուկէս արծաթ ռուբլի։ Կանխիկ փողը չվճարողին՝ լրագիրս չուղարկուիր"։

Տարիէ մի 'ի վեր Կոստանդնուպօլսոյ մէջ Թ-ղթի անուն կիսամսեայ հանդէս մի կրհրատարակուի. որուն Յունուարի 22 թուոյն մէջ հետեւեալ ցաւալի և միանգամայն հետաքրքրական յօդուածը կրկարդամք. որով յիշեալ հանդիսին խմբագիր-Տնօրէնը դառնապէս կողայ իւր հանդիսին հրատարակութենէն կրած վնասուն վրայ։

ՏԱՐԱԲԱՂԴ ԹՈՂԹԻԿ

Աւրդարեւ՝ շատ ժամանակ և զրեթէ մեր տղայութենէն 'ի վեր, լաւ հասկացած էինք որ դժբաղդութիւնը իրեն գլխաւոր գործ մի ըրած է զմեզ հանապազ իւր անխիղճ թակարթին մէջ որսալու. բայց աւելի քաջ գիտցանք և մանաւանդ վարձով իսկ տեղեկացանք, երբ սա վերջին տարիներուս մէջ խմբագրութեան պաշտօնը կսմիլին յանձնառու եղանք կատարել։ Սակայն ճիշտը խօսելով մեր գործին տկար ընթացքը չէր որ զմեզ այս ցաւալի վիճակին հասցուց կամ մեզի 1200 զուռուշ վնաս ընել տուաւ նախորդ շրջաններնուս մէջ, այլ անկեղծ ու անաչառ տեսլով մէկ քանի կիրպարանեալ Դաւիթներն էին որ Թուղթիկին քիթն 'ի վեր ծլծմայլին գարշահոտութիւններ տալով մարեցուցին զանի, մինչև անգամ արժանաւորեցան նա Մեղուի 148 թուոյն մէջ Թուղթիկ կոչ թեւեր կոչուելու։ Սակայն ախտս, որ մինչև ցարդ ոչ Մեղուի գրութիւնը և ոչ մեր տուած ցաւալի հաշիւը կարացին դանել կերպով իւրք Թուղթիկի վերջին գարման մի պատրաստել, և կամ ոմանց սիրտերը կակղացնել։ Ստուգիւ կրսեմ որ մեր օրը գաղրեցան գեղգեղուն սոխակաց քաղցրաձայն երգերը, ծաղկանց անուշաբոյր հոտերը, ազիերաց յորդառատ համբուրը. ուստի այսօր վայ կուտայ Թուղթիկը իր ողբերգի գլխուն, և ահագին անէծքներ կրկարդայ իր ծնունդին. վասնզի մառախլապատ օրեր և ցաւալի ժամեր կրյաջորդեն իրեն. վերջին շունչը կրիշէ այսօր. և իր ունեցած փոքրիկ կոուցը ու վատուկ թեւերը երերցնելով կսթիլ մի զովացուցիչ ջուր կպտակ յաղագայնոց. քանզի ինքն արդէն սառուցեալ և անկեալ լինելով՝ կատուի պառակտիչ ճանկերուն ենթակայ եղած է։ Աւա՛ղ բեզի Թուղթիկ, զի'ի զուր տքնեցար զուարամ մի ողջոյն. և 'ի թերև վաստակեցար տիւ և գիշեր։ Աւրդարեւ չկենայեցիր երբէք քու աշխատութիւնդ երբ մէկ կողմէն ցրուաշունչ հողմունք, ու միւս կողմէն զարմանալի քամիներ կրփչէր։ Եղուկ բեզի Թուղթիկ և եղուկ քոյդ դժբաղդութեանդ, զի դու կամեցար Աղգային կուսի ատեն նորաբողբոջ գաղափարաց զէմ և ոչ մի ընդդիմահար բան արտասանել՝ ճշմարտութիւնը ոտաց կոխան չընելու համար. դու յանձնառու եղեր ցնասի, քան թէ խոտորիլ 'ի ստուգութենէ. բայց այս եղաւ քու ճակտիդ անհերելի յանցանք մի, և անմարելի կրակ մի քու սրտիդ, զի թողեր զկեղծն և ընդունեցիր զստայդն։

Ազգային քաղաքական ժողովոյն որոշմամբը՝ Յոհաննեան Ղազարոս աղան և Աղասիեան Գեորգ աղան Հարցաքննութեան ժողովոյն (Իսթինթաք մէճլիսի) անդամ անուանեցան։ Նմանապէս Վէմեան Գէորգ աղան անշարժ ստացուածոց վերաքերեալ ժողովոյն (Էմլաք մէճլիսի) անդամ կարգեցաւ։

մը թողած է զեւր մարմինը։

Այս նիւթոյս վերայ մտածելի բանք շատ կան, բայց զրեալ զայնս՝ աւելորդ է. որովհետեւ որ և իցէ մտայի և առողջախորհուրդ մարդ՝ եթէ փոքր մի խոր մտածէ՝ կարողէ ինքնին դուշակել, թէ քանի քանի նման այսոցիկ հոգեկորոյս մոլորութիւնք կաբեն յառաջանալ յընդունելոյ զվերոյիշեալ հեթանոսական թիւր կարծիքը։ Բայց կան ևս քանի մի այլ առարկայք, որոց վերայ կարելի է՝ առանց դայթակղութեան և առանց վնասու հաւատոյ՝ մտածել և աղտօրէն դատողութիւն առնել, որպիսի են հետեւալքս։

Ա. Այն աստղաբնակ մարդիկն ի՞նչ լեզուաւ են խօսում։

Բ. Մի՞ լեզու միայն ունին, թէ շատ զանազան լեզուներ։

Գ. Կա՞յ արդեօք և նոցա մէջ (ինչպէս մեր մէջ) գրաբառ և աշխարհաբառ, կամ ժանդոտեալ հին լեզու, և հասարակաց հասկանալի նորախօսութիւն՝ իբր կամուրջ լուսաւորութեան։

Դ. Նոցա լեզուի կամ լեզուաց բուն արմատն ո՞րն է, Անսկրիտն, թէ այլ անծանօթ բարբառ։

Ե. Ունի՞ն արդեօք և այն լեզուքն Օ.ենդի մէջ նորդութեամբ այնքան յարակցութիւն Անսկրիտեան արմատի հետ, որքան ունի (ինչպէս կարծւում է) Հայկական ամենահին լեզուն, որ պարծանք է մեզի։

Մնում է մեզ այս տեղ մի բան հրապարակաւ խոստովանել։ Որովհետեւ Տոքթորն վերակարդեալ հատուածոյն մէջ ասաց, թէ Մոսի համար հաւանական է երևում՝ այնպէս կարծելն, այս բանս ցոյց է տալիս յայտնապէս՝ թէ նա իւր մտքն ընդունած է զայն կարծիքը, մոռանալով թերևս զառաջին գրածը Հ-գէ-ղն Կ-րա-ր կոչուած գրքուկին մէջ, որ տպուած է 'ի Մոսկուա, միևնոյն ժամանակում, այսինքն՝ 'ի 1853 թուին։ Վասնորոյ խոստովանումեմք, որ ամենևին իրաւունք չունիմք մեք՝ նորա մտայ հեռաձիգ տեսութեան սահման դնել, ազատ կամայն արդելք առ՝ և ասել թէ "մի ընդունիր"։ Իւրաքանչիւր մարդ կարող է ազատաբար իւր մտայ դատողութեամբն ընդունել ինչ որ հաւանական երևի իւրեան, և չընդունել կամ մերժել ինչ որ հաւանական չերևի։ Բայց որովհետեւ Վարդապետարան գիրքն յատկապէս մերազնեայ մանկանց կրօնական հրահանգութեան համար է գրուած և տպուած, պիտոյ էր անշուշտ՝ ըստ իմս դատման՝ նոյն գրքի մէջ զայն վարդապետութիւնքը միայն դնել՝ որք ընդունուած են աներկբայապէս Յովհաննէս Ս. եկեղեցւոյ Հայաստանեայց, կամ զորս ուսուցանում և քարոզում է նոյն իսկ եկեղեցին՝ համաձայն Աստուածաշունչ Գրոց և անխարդախ բանից նախնի Հայոց և վարդապետաց։ Նաև աւելորդ և անպատեհ էր ըստ ամենայնի՝ Քրիստոսաւանդ Կրօնի ճշմարիտ վարդապետութեանց հետ՝ օտարազգի մոլորամիտ ազանդաւորաց այլանդակ կարծիքները կամ շաղիաղիաբանութիւնքը, իբր զուտ ոսկւոյ հետ՝ պղինձ, երկաթ, արճիճ խառնել և զանդել. որք ոչ ինչ՝ բայց 'ի պղտորութենէ մտայ և 'ի հոգեկան վնասուց ուսանողաց կամ ընթերցողաց՝ կարեն պատճառել։

ՄՍԵՐ ՄՍԵՐԵԱՆՑ
(Պիտի շարունակուի։)

ՄԵՌԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յաւալի սրտիւ կը ծանուցանենք թէ Տիրվէրեան արժանայարգ Կարապետ ազան, որ քաղաքիս ակնառոյծայ ընկերակցութեան գլխաւոր անդամներէն մէկն էր ու պարկեշտ և բարեպաշտ անձ մըն էր, երեքշաբթի գիշեր կաթուածի սաստիկ հարուածով մի իւր մահկանացու ընթացքը կնքեց 'ի հասակի զրեթէ 65 ամեայ:

Հաղիւ թէ ամիսներ կայ, որ հանգուցեալը իւր սիրելի ընկերը կորուսած էր և անոր մահուան վերայ դառնապէս կողբայր. իսկ այսօր իւր յանկարծահաս կորստեան վերայ կուլան և կը յաւելնեն իւր զաւակները, աղգականները և իւր բազմաթիւ բարեկամները:

Հանգուցեալին յուղարկաւորութեան հանդէսը շաբաթ շաբթի օրը կատարեցաւ սովորական վառօք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ, 7 ՓԵՏՐՈՒԱՐԻ

Բարձրագոյն Դուռը, օգոստափառ Սուլթանին մարդասիրական հրամանացը համեմատ, կը շարունակէ միշտ իւր ջանքը՝ խնայութեան ամեն հնարաւոր միջոցները 'ի գործ դնելու 'տէրութեան ընդհանուր ծախուց նկատմամբ: Բարձրապատիւ Մեծ Նպարգոսին ուշադրութիւնը յատկապէս օսմանեան դրամական կացութեանը վերայ հաստատեալ է և կը յուսացուի թէ մօտերս գլխաւոր բարեկարգութիւն մի պիտի ըլլայ այս կարևոր գործոյն վրայօք: Մեր ըսածին ապացոյց մը կրնայ համարուիլ օսմանեան լիրայից գիներուն օրըստօրէ իջնելը, կամ լաւ ևս է ասել թղթադրամոց արժողութեան աւելնալը:

—Մայրաքաղաքս հրատարակուած Լ. ԷՎԵՆԻ ՀԷՐԵԼ անդղլիարէն լրագիրը կըսէ թէ, հաւատարիմ աղբիւրէ մի իմացած է թէ Բարձրագոյն Դուռը այս օրերս 10 միլիոն լիրա սթէրլինի փոխառութիւն մի ըրաւ:

Իսկ Ռ-ՐԷ Պ'Օրիոն դաղղիերէն լրագիրը կը պատասխանէ թէ, "Մեր պաշտօնակից եղբայրը ճշմարտարեր է այսպիսի լուր մի տալու. քանզի փոխառութիւնը լմընցած չէ":

—Լիուսաց դեսպան վսեմափայլ մօսիւ տը Լ. ապանոֆ իշխանը անցեալ շաբթու ՓԷՆԷՐ գնաց յայցելութիւն Յունաց սրբազան Պատրիարքին և իւր բարձր աստիճանին վերաբերեալ պատուով և մեծ յարգանօք ընդունուեցաւ պատրիարքարանին գլխաւոր պաշտօնատարներէն:

—Օգոստափառ Սուլթանը՝ իւր անձնական դանձէն հանելով, 20 միլիոն դուռուշ տուաւ եկամտից պաշտօնէին, որպէսզի մայրաքաղաքիս պահապան զօրագնդաց Ճացորդ ամսականները վճարէ: Կորին Վ. ԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ այս ազգասիրական վեհ ընթացքը բացատրութեան կարօտ չէ:

—Կը հաստատեն թէ Բարձրագոյն Դուռը շրջաբերութեան համար նահանգները թղթադրամ յուղարկելու որոշումը ետ թողուցեր է, որ 'ի գործ պիտի դրուէր ներկայ տարւոյս Մարտէն սկսալ: Թէպէտև այս լուրը տակաւին հաստատուն չէ, այսուամենայնիւ ստոյգ է որ արքունի փողերանոցին մամուլները մայրաքաղաքիս համար թղթադրամ չեն տպեր քանի մի շաբաթէ 'ի վեր:

—Փարիզէն կը գրեն թէ օսմանեան դեսպան վսեմափայլ Վ. ԷԼԻ փաշան Սպանիա երթալով իւր դեսպանութեան հրամանագիրը Իղապէլ թագուհւոյն ներկայացնելու համար, Փարիզի դեսպանատան գործոց վարչութիւնը Կոնիկեան Յակոբ էֆէնտիին յանձնեց, որ նախորդ առաջին խորհրդոյ քարտուղար էր: Այժմեան առաջին խորհրդոյ քարտուղար Ալի-Պէյը՝ այս բանին վերայ դժուարելով, ճամբայ ելած է կըսեն, Կ. Պոլիս վերադառնալու:

—Կայսերական հրովարտակաւ, Օլիա-Պէյը՝ որ ոստիկանութեան (բոլիցիա) պաշտօնատան խորհրդական (միւշթէշար) էր, Բարձրագոյն Դրան դեսպան անուանեցաւ ՅԱԹԷՆՍ: Իսկ ոստիկանութեան խորհրդականի պաշտօնը Ճէլալ Պէյին յանձնուեցաւ:

Մաղլամ փաշան Արդարութեան բարձրագոյն ատենին անդամ անուանեցաւ:

Ռևևտրական ժողովոյն անդամ Վ. ահանեան Յոհաննէս էֆէնտին՝ նոյն ժողովոյն երրորդ դրասենեկին նախագահ կարգեցաւ:

Մինասեան Մինաս էֆէնտին և Կավրիէլ Էֆէնտին վաճառականութեան պաշտօնատան մէջ հաստատուած բողոքոյ ատենին անդամ անուանեցան:

—Օգոստափառ Սուլթանը հաճեցաւ Օսմանիէ կարգին շքանշանը շնորհելու Ահմատ Վ. էֆիք էֆէնտիին՝ որ պարեպաշտական հաստատութեանց տեսուչ (էվքաֆ նազիրի) է, Ռէմալ էֆէնտիին՝ որ հասարակաց կրթութեան պաշտօնեայ է, և Միւմթազ էֆէնտիին՝ որ եկամտից տեսուչ է:

Նորին Վ. ԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ՝ միևնոյն կարգի շքանշանը շնորհեց Մէքքէի մեծ շէրիֆին:

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա, 10 Փետրուար:

Հարաւային խոնաւ ու անձրևաբեր հովերուն հիւսիսային չոր ու առողջարար օդը յաջորդեց բարեբաղդաբար. և այսօր արևափայլ պայծառ օր մը կընէ, և ըստ երևմանց այս օդը պիտի շարունակուի քանի մը օր: Հովը քիչ մը սաստիկ է և Ադամտրի ջերմաչափը 6 աստիճան կընդհանրապէս դրօյին վերայ:

—Կըլսեմք թէ Հայաստանի Վ. ան քաղաքին մէջ ծանր կռիւ մը պատահեր է 'ի մէջ Հայոց և Տաճկաց ու երկու կողմէն ալ քանի մի հոգի վիրաւորուեր ու սպանուեր են: Այս ցաւալի դէպքին վրայօք տակաւին մանրամասն տեղեկութիւններ չունիմք:

—Յունաստանի Նպարդի քաղաքը ապստամբական խռովութիւն մի ծագեցաւ թագաւորական բիրդապահ զօրաց մէջ. որոնք Կեցցէ՛ ժողովուրդը, կեցցէ՛ Սահմանադրութիւնը աղաղակելով, մեծամեծ անկարգութիւններ գործեցին: Ամէնքի կատաղութիւնը անմիջապէս բազմաթիւ զօրք յուղարկեց 'ի Նպարդի. ուստի կը յուսացուի թէ բարեկարգութիւնը և անդորրութիւնը շուտով պիտի վերահաստատուին:

—Գաղղիոյ տէրութեան Ջինսպի անուն շոգեշարժ ֆրեկատը, և Հերօն անուն պատերազմական թղթատար շոգենաւը, նմանապէս Ռուսաց տէրութեան Օլեկ անուն ֆրեկատը այս շաբթու մեկնեցան Ամէնքի նաւահանգիստը Բիրէոս երթալու: Տարակոյս չկայ թէ այս նաւերուց մեկնիլը՝ Յունաստանի մէջ պատահած ապստամբական խռովութեանը պատճառաւ է:

—Բրուսիոյ թագաւորը Կարմիր Արծուոյ կարգին շքանշանը յուղարկեր է Ամպիլ—Պատիր չէլիին:

—Իտալիոյ թագաւորը հոսճեցաւ սրբոյն Մարիմատոի և սրբոյն Ղազարու կարգին ասպետութեան շքանշանը շնորհելու սինեօր Բէմբո Ռէֆիօ խոտոյցի վանականին և սինեօր Ստէֆանի խոտոյցի բժշկին, 'ի վարձատրութիւն ծառայութեանցն, զորս մատուցեր են խոտոյցի ժողովրդեան քաղաքին:

—Կոստանդնուպօլսէն կը գրեն թէ յիշեալ մայրաքաղաքին Յունաց գլխաւոր եկեղեցականաց մէջ դժբաղդաբար, երկպառակութիւնը վերստին բորբոքեցաւ և անցեալ կիրակի օրը պատրիարքարանը դատարուած աղգային ժողովը բաղարիին անդամ մեաց ու անվայել կերպիւ բաժնուեցաւ: Յունաց սրբազան Պատրիարքը ստիպուեցաւ Բարձրագոյն Դուռը երթալ և պատերին գործոց պաշտօնէին ծանուցանել այս ցաւալի դէպքը:

—Այսօր ցորեկը Ազիա Քաթերինա կոչուած թաղը հրդեհ մի պատահեցաւ, որ կրնար սոսկալի հետևութիւններ ունենալ 'ի պատճառս հիւսիսային հովուն. բայց մեր ընդհանուր կառավարչին ներկայութիւնը և իւր մարդասիրական եռանդուն ջանքը, նմանապէս Քէչիսա Պէյին. Հասիսա Պէյին և Մուհասիպճի Պէյին ներեռայութիւնը մեծապէս օգնեցին հրդեհին շուտով մարելուն, որ միայն երկու տուն հրոյ ճարակ ըրաւ:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Աֆիոն Գարահիսարի, Ղոնիայի, Պրուսայի, Իզմիրի, Մանիսայի (Սարուխան) ներկայ տարւոյս տասանորդները (էօշուր) ծախու են:

Գնոյ առնելու կամք ունեցողները հրաւիրեալ են Պէյլէր օղլու Յակոբ աղային հետ տեսնուիլ, որուն միայն յանձնուած է այս վաճառումները ընել և անոնց պայմանները ծանուցանել խնդրօղաց:

Մեծարգոյ Պէյլէր օղլու Յակոբ աղան Կ. Պոլիս Աշիր էֆէնտի խանը թիւ 3 սենեակը կը բնակի:

Յարգոյ Անբոնիո Բէրինի իտալացի ասպետը, որ քիմիագործ եւ ձեռնածու (բրէսթիճիթարորէ) է օգոստափառ Սուլթանին ծառայութեանը մէջ, այս օրերս Իզմիր գտնուելով՝ յանձնառու եղած է, 'ի նպաստ երկու իտալացի կարօտ գերդաստանաց, իւր զուարճալի արհեստը անգամ մի 'ի գործ դնել, եւ մագնիսականութեան փորձ մի ընել հնկան մի վերայ: Ներկայացումը պիտի ըլլայ Գամարանս բատրոնին մէջ Փետրուարի 12ին երկուշաբթի գիշեր: Ներս մտնելու տոմսակները սովորական գիներով պիտի տրուին:

Տեօքմէճեան պատուելի պարոն Յոհաննէսին քով որ Հոիսիմեանց վարժարանին մէջ հայերէն դասատու է, զանազան օգտակար գրեանք կը գտնուին 'ի վաճառումն. նմանապէս ժամանակին բիանօ մը:

ԵԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Հոլլօուէյի Դեղահատերով:

Ինչու համար հիւանդութիւնները աղետալի վախճան կունենան:

Վատնզի փոխանակ անոնց պատճառացը ուշադրութիւնը հատուցանելու, անոնց արդիւնքը կը ընդունինք. և փոխանակ ուղղակի անոնց արմատը ջնջելու, միայն հետևութեանցը հոգ կրտանիմք: Հոլլօուէյի դեղահատից ներգործութիւնը կատարելապէս այս դրութեան հակառակ կերպիւ կազդէ. այսինքն մարմնոյն գալտնի գործարաններէն և արեան շրջաբերութենէն կարտաքսէ անտաբեր և վնասակար նիւթերը, որոնք բորբոքումն ցաւ, ջերմ, թուլութիւն և ֆիզիկական նուազումն կը պատճառեն. և այս կերպիւ հիւանդութեանց աղբիւրը ջնջուելով, անոնց հետևութիւններն ալ անհետանալ կը լան: Սովորական դեղերը ժամանակաւոր աղէկութիւն մը միայն կը պատճառեն հիւանդին, իսկ այս դեղահատերը, ընդհակառակն յարմատոց անտի կը ջնջեն զհիւանդութիւնը:

Վատառողջութիւն:

Վատառողջութիւնը սովորաբար յառաջ կուգայ ջղային ակարգութիւններէ. որոնք սրտին գործողութիւնը կը ընդարձակեն և մեր կենդանական բոլոր կարգը ամենը մէկտեղ կաւրեն: Արդ՝ այս պատուական դեղահատերը ջղային գրութիւնը (սիստէմ) կը վերահաստատեն թէև աւրուած ըլլայ, առողջութիւնը և միտքը կը զօրացնեն այնպիսի դէպքերու մէջ ուր միւս ամեն դեղերը բան մը չեն կրնան ընել:

Լերդի հիւանդութիւն և մաղձ:

Լերդի (գառա ճիյէր) հիւանդութիւնները և մաղձը շատ անգամ ամենասաստիկ ցաւեր կը պատճառեն: Ո՛րչափ անձինք արդեօք այս ցաւով վատացեալ ըլլալով, չեն գիտեր բժշկութիւն միջոցները, որոնք իրենց մօտը կը գտնուին: Եթէ այս դեղահատերէն քանի մը հատ առնելու ըլլային, ինչպէս որ նշանակուած է իւրաքանչիւր ծանուցագրին մէջ, շուտով պիտի ազատուէին իրենց ցաւերէն: Հիւանդութիւններն շատերը, որոց ենթակայ է մարդոյս մարմինը, կրնան քիչ ժամանակուան մէջ ջնջուիլ՝ այս դեղահատերը գործածելով, ինչպէս որ ապացուցուեցաւ բազմաթիւ օրինակներով:

Վատնդաւոր ժամանակ:

Եթէ կանայք հոգ չընեն ըստ ժամանակին գործածելու այն թանձր և վնասակար հիւթոց բազմութեանը երբոր անոնց բնութիւնը դադրած է, իրենց առողջութիւնը և կեանքը իսկ անանցանելի կը ջնջուի կրտարուի երբև հեղեղէ մը: Այս սոսկալի գաւառ պիտի հաստատուն դարմանը Հոլլօուէյի դեղահատերն են և այս դեղերով կանայք կրնան իրենց վտանգաւոր ժամանակը (ուժ քրիթիք) ապահովութեամբ անցընել և իրենց առողջութիւնը վայելել: Այս դեղահատերը օգտակար են նաև կանանց ֆիրարներեալ ամեն հիւանդութեանց և խլողութեանց որ կը պատահին կատարեալ հասակին մէջ:

Ցաւատութիւն և տկարամտութիւն:

Հաղարաւոր անձինք դոհ կը լան այս սեսակ սեամաղութեան ֆիրքոնորին, որ անանց պատճառ հրեշի մը ձև կառնու, և չին գիտեր իրենց ցաւերը թեթևցնելու հարկաւոր դարմանը, այն ինչ այսպիսի դէպքերու մէջ Հոլլօուէյի դեղահատերը շատ անգամ մեծ ներգործութիւններ ունեցան: Ուստի շարունակ գործածութիւնը այս պատուական դեղահատից՝ հարկաւոր զգուշութեամբ 'ի կիրառութիւն, խոցն կը ժշկէ ամենածանր դէպքերը որոշապէս և հինցած ըլլան: Ուղղին ջղային գրութիւնը (սիստէմ) կը հանգարտի և հիւանդը դարձեալ իւր առողջութիւնը կը ստանայն:

Այս դեղահատերը յատկապէս խիստ օգտակար են վասն յետադայ հիւանդութեանց.

Ընդհատական ջերմք (ֆիէվը էնթէրմիթանթ): Շնչարգելութիւն (ասթմ): Մաղձային ջերմք (ֆիէվը պիլիօզ): Խիթ (գոլիք): Ցաւք որովայնի: Թուլութիւն և նուազումն ուժոյ: Օձիկ (էլանճիզ): Կանանց ամսական օրինաց ապկարգութիւնը: Ոտնացաւութիւն (նիդրիս): Գլխացաւութիւն: Բորբոքումն: Դալուկն (սարլըք): Երիկամնաժէտութիւն: Տեռատեսութիւն (մայոպը): Յոգնացաւութիւն (բիւմաթիսմ): Միզարգելութիւն: Պարանոցի ցաւ: Քարկամ խիճ միզանոցի: Ուռոյք (գիւամօր): Կեղք (իւլսէռ): Ամեն տեսակ որդերը (սողուլճան): Ափրոդիտեան ախտերը.

Այս դեղահատերը, որ կը շինուին զանազան գանձանի անձնական վերակացութեամբը, անոր ընդհանուր գործարանաց մէջ կը ծախսուին 'ի Լոնտոն Սիրէնա կոչուած թաղը թիւ 244. և 'ի Նոր Եորգ Մայիսէն Էն թաղը թիւ 80: Իսկ ուրիշ երկիրները, իւր գործակալաց քով կը գտնուին. որոց անունները հետևեալներն են. Իզմիր՝ Իւքար և Ճիւանլի, և մօսիւ Բուլ բժշկին, որ Ֆարմասի ալսանտ անուն դեղավաճառի խանութիներն է. Կ. Պոլիս՝ Ա. Սմիրնա և Ֆ. Տէլլասուսա, Ա. անդրիա՝ Ֆ. Բէկրիմի, Խանսիլ՝ Կայլարի, Քիոս կղզի՝ Ճ. Սմիրելլիչ, Սալիա՝ Է. Միւիր, Պուրսա՝ Էլիզա Վուլյա

Խմբագիր-տէր լրագրոյս,
Ղ. Գ. Պալեաղարեան:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ